

Թիւն առնելով՝ խորհրդակցելէ ետք միակամ որոշեց
այսպէս և յայտնեց թէ, Ստուածատուր վարդապետի
դատը ինքը անձամբ պիտի վարէ, և ոչ թէ փոխանոր
դաբար, դատը Մեսրոպի եպիսկոպոսի դէմ է և ոչ եզրա
տահայոց. քաղաքական է և ոչ կրօնական. իսկ 'ի կո
րուսանել դատին տուժելու ծախսը և կրելու պատիժը
յանձնախումբին ձեռնհասութենէն վեր ըլլալով՝ վար
չութեան դիտանալու և դործադրելու բանն է. նոյնպէս
տեղեկագրոյն և վճռոյն տպագրութեամբ հրատարակու
թիւնը:

Նիստ. Գ.

Մեսրոպի եպիսկոպոսը իրեն դէմ եղած ամբաստանու
թեանց պատասխանը բերաւ, որ հետեւեալն է:

Գերապատել տեսիր,

Արժանապատիւ Ստուածատուր վարդապետին 1871
Յունիս 5 թուով ինձ դէմ յանձնած ժողովոյ մատուցած
ամբաստանութեանց թղթոյն պատճէնը ընդունելով պա
րունակութեանցը տեղեկացայ և կրօնութեամբ պատաս
խանս ուղղել առ արդարասէր ժողովը, և ցուցանել ա
նոնց արժէքը, որը գրաւարտութիւն են մանաւանդ քան
թէ ամբաստանութիւն: Նախ այն ըսածը թէ ես Գաշի
րէի և Աղէքսանդրոյ մէջ իրեն անիրաւութիւններ և
անպատուութիւններ ըրած եմ, բոլորովին սուտ է և ան
հիմն: Նոյնպէս՝ սուտ է Աղէքսանդրոյ եկեղեցւոյն սենե
կին մէջ իր վրայ յարձակում ընել և ծեծելս: Իսկ նոյն
տեղը եղած խոսակցութիւնը բացատրուած չըլլալուն
համար՝ չհասկնցուի թէ ինչ խօսքեր կը յատկացնէ ինձ
որ և ես կարող ըլլայի անոնց պատասխանել կամ հերքել:
Սուտ է նաև չանթային համար ըսածը թէ յափշտակե
ր կ'ընէր և ապա բռնութեամբ բացեր եմ. քանի որ ինքը
իւր ձեռքը բացած է զայն՝ ըստ խնդրոյ ժողովոյն և
փաստաբանին: Գողև աւաղակ ես ըսելով խոհարարու
թիւն ըրած չեմ ամենեւին. նոյն միջոցին զրազիր Շա
հանին գիր մը գրել տալ և իրեն բռնի ստորագրել և
կնքել տալս սուտ է նմանապէս, քանի որ կնքը իւր
գրպանը պիտի գտնուէր և ստորագրութիւնն իւր ձե
ռամբը պիտի գրուէր. իսկ Գաշիրէ հետագործին ու
գիւղերը ժամը երկուսին իւր սենեակը կնքուիլը ժողովոյն
կողմանէ եղած է և ոչ իմ կողմէս: Իւր սենեակին դրան
առջև պահապան դրուին ինձ անձանքի մը բոլորովին. և
նոյն սենեակին դոյն մնալուն պատճառը մինչև ցայժմ,
տեղւոյն աղջայկները գիտեն և ոչ նուազ: Զրպար
տութիւն կրնէ նոյնպէս երբ կըսէ թէ չորս պէսպէսի ի
րենց բիրտերով իւր սենեակը մտցուցեր եմ, և անոնց
պատուէրներ տուեր եմ, և յետոյ դուրս հանելով իրեն
սենեակին բոլորովին շարքեր եմ. այսպիսի բան մը ինձ
ենէ չվերաբերիր, քանի որ ես գիշերապահներու տեսուչը
կամ վերակացուն չեմ: Իսկ չափու Յարութիւնը իւր
սենեակին առջև պահապան դնողը տեղւոյն վարչութիւնն
է և ոչ ես: Երկու օր և երկու գիշեր նոյն սենեակին մէջ
առանց կերակուրի բանտարկուիլը, գրիչ կազմար քո
վէն վերցուիլը, դուրսէն եկող այցելուները ներս մտնե
լու հրաման չկայ ըստեղծով ետ դարձուիլը, և իրեն ալ
դուրս ելլելու հրաման չտրուիլը, բոլորովին անհիմն և
ստացող խօսքեր են: Միայն ժողովոյն կողմանէ պատ
ուէր գրուած էր տէր Արքայապետ քահանային որ՝ նա
Գաապարեաններու հետ չտեսնուի: Իսկ իրեն համար
կերակուր նոյն իսկ տէր Արքայապետին երէցիկներ տարած
է, և ինք անվայել և նախատական խօսքերով կերակու
րը չէ ընդունած և խնդը կինը վճռուած է: Այս սակ նոյն
պէս երբ կըսէ թէ Գաշիրէն իր անուանը եկած հեռա
գիրը բացեր կարգապէս և բռնի ստորագրել տուեր եմ:
Եթէ այդպիսի բան մը ըլլար, կամքը իրենն էր, կրնար
չստորագրել: Այս խօսքին անտեղութիւնն անկէ յայտ
նի է մանաւանդ, որ Եզրապետին հեռագրերն արաբերէն
լեզուաւ կըլլան և ես արաբերէն չեմ գիտեր: Իրեն Գա
շիրէի գործակալատարին ստորագրութեամբ կեղծ հեռա
գիր խրկելով զինքը Գաշիրէ ուղղել ալ գրաւարտութիւն
է. վասնզի այդպիսի հեռագիր մը իւր տնօրէնութեամբ
խրկուիլը, և ասորը գաղտնիքն ինք գիտնայր ստուգուած
է: Այդպիսի Գաշիրէ երբ կըսէ թէ Եզրապետին կա
ռածոց ձեռնամուխ ըլլալով տուժարները գործակալին
պահանջներ եմ, թէ վարձատրաց պատուիրեր եմ որ այ
սուհետեւ երբեք զրամ չտան Երուսաղէմի և նորա գոր
ծակալին սպառնալեօք պատուիրեր եմ որ զրամ չհաւա
քէ և թէ գոյուած և կիրուած սենեակին դռները կոտրել
և ներս մտնելու առաջարկեր եմ: Այս խօսքերուն զոր
պարտութիւն ըլլալը նոյն իսկ իւր գործակալատարն իւր
ստորագրութեամբ վկայած է: Ամենեւին չեմ յիշեր իւր
ըրած սա ամբաստանութիւնը թէ պատուէր տուած ըլ
լամ տէր Արքապետ քահանային և Նախուսեան Յով
հաննէս աղային որ զինքը Գաշիրէի եկեղեցւոյ սենեակէն

դուրս հանեն. բայց եթէ այդպիսի տնօրէնութիւն մը ե
ղած է, տեղւոյն արձանագրութեան կրնայ ստուգուիլ:
Իսկ նոյն սենեակաց Երուսաղէմի տնտեսը ըլլալը և ի
րենց յատկացած լինելու հանգամանքը ինձ չվերաբերիր
քանզի ազգին ստացուածքը մասնաւորի կամաց կնքա
կայ չկրնար ըլլալ. ուստի և այս ժողովուրդին վերաբեր
եալ խնդիր մըն է:

Գաշիրէի ժողովոյն երբեք առաջարկութիւն ըրած
չեմ որ Երուսաղէմի միաբանութեան յանձնուած կա
ռածագրերը ետ առնեն, քանի որ իրենց եկեղեցւոյն ու
տաճարները կեցած է, և թէ նոյն վարդապետը
նախ դուրս հանելու է կայն և այլն. նաև ոչ իսկ
ժողովականաց մէկին առաջարկեր եմ այդպիսի որոշում
իրեն հաղորդել: Եւ ինձ ինչ հարկ կար այդպիսի առա
ջարկութիւն մը ընելու, քանի որ նոյն կառուածներէն
եղած միասոց պատասխանատուն ինքն է: Սուտի ժո
ղովոյն յիշեալ անգամը ո՛վ ըլլալը պէտք է որ ցոյց տայ
վասնզի գիտեմ որ այդպիսի խօսք եղած չէ ժողովին մէջ
ինչպէս ինք կ'ուզէ հաւատացնել թէ եղած է. և եթէ ե
ղած է՝ ժողովոյն արձանագրութեան կրնայ ստուգուիլ.
Բայց զիտել հարկ է թէ ժողովոյն ըրածն ու արձանա
գրածն իմ անձին չվերաբերիր՝ այլ ազգին: Նուազս
չէ թէ իւր եպիսկոպոս՝ այլ իրեն մարդ իսկ Երուսաղէ
մայ սրբազան Պատրիարքին կամ միաբանութեան պատ
ուայն դէմ անվայել խօսք բնու ըրած չեմ. մանաւանդ
քանի որ այս մասին անոնց հետ յարաբերութիւն մը
չունիմ. և այն անձինքներն մինչև նոյն ժամանակը
մնաս կամ անպատուութիւն մը տեսած չէի: Արեւի
թէ այդ մասին իւր րաճնները ուրիշին բառեալ կ'ուզէ.
սակայն շատերը կը վկայեն իւր առ միաբանութիւնն ը
րած անպատու խօսքերուն, և ես չառ անգամ զինքը
խորտուած եմ որ չպարտաւ իւր սրբազան Պատրիար
կոյն իւր կողմէն եղալովն:

Ահա ինչպէս յայտնի է, Ստուածատուր վարդապե
տին ըրած ամբաստանութիւնները բոլորը անհիմն և ա
նարժան գրաւարտութիւններ են, անվայել մեր եկեղեցա
կան կարգին: Այսպիսի անարժան գրաւարտութիւնները
նոյնպէս կը պատճառեն ամեն մարդու, որ չափ ևս առա
ւել մեզ, որ հովիւ լինելով Քրիստոսի հօտին՝ Ստուա
ծայն պատուէրներ կը քաղուէր միշտ մեր խնամոց
յանձնուած ժողովուրդին: Արդարեւ շատ զիւրիւն է
բանիւ կամ գրով ամբաստել զգրաւարտութիւն տեղալ,
բայց զանոնք ստուգելն ալ նոյնչափ զիւրիւն են արեւօք:
Անշուշտ արգարտակ ժողովը պիտի պահանջէ Ստ
ուածատուր վարդապետին որ հաստատէ իւր ըսածները
և այն ատեն պիտի հասկնայ թէ ինչ սե գրաւարտու
թիւններ են անոնք:

Արդ ինձ կըմնայ յայտնել արժա. ժողովոյն թէ իմ
Պօլիս կանչուելուս պատճառ տուող թուղթը ո՛չ թէ
այս ամբաստանութեանց թուղթն է որ իւր պարունա
կած փոփոխութիւններով ու այլալուծութիւններով, ամե
նեւ իսկ կարեւորութիւն չունի, այլ Ստուածատուր վար
դապետին 1870 և Յունիս 22 թուով առ աղջոյն Վար
չութիւն ուղղած աղբրագիրն է, որոյ գործութեամբ
նոյն վարչութիւնն արժան համարեր էր նաև զիս եղեւ
նագործ անտեղեկ պատուէր: Նոյն աղբրագիրն իմ
վրաս ոճրագործութեան և անբարոյականութեան ամ
բաստանութիւն կընէր. որոյ դէմ ինքը ինչ արդարա
յցնելու համար եկած եմ ևս. հետեւաբար նոյն աղբրա
գիրը կը պահանջեմ և կարծեմ իրաւունք ալ ունիմ պա
հանջելու, և դատն անոր վրայ տեսնուիլն և կրած զրկա
նացս հատուցում մը ըլլալը խնդրելու. գոր զատուհ իմ
թէ արժա. ժողովը չպիտի զանայ Քրիստոսի հօտին
ծառայող արուպ եպիսկոպոսի մը: Արդէն նոյն առաջին
գրութեան և անոր նմաններուն հետգրեալ հրապարակաւ
հրատարակուելուն վրայ ստիպուած էի պատասխան մը
գրել Զմիւռնիոյ Արքայապետ միջոցաւ 1870 Հոկտ. 4
թուականաւ, որմէ մէկ օրինակ խրկեւ իւր տեղեկա
գիր առ աղջոյն Արքայապետ վարչութիւն. և աղբա
սէր ժողովը կարողէ անկէ ալ տեղեկանալ եղելութեանց
պարագաներուն: Ստուածատուր վարդապետի գրու
թեանց մէջ զարմանալի մէկ կէտն ալ այն է որ, իւր թէ
ինք անմեղ և սուրբ կեցած միջոցին՝ առանց պատճառի
և 'ի դուր, ինքը անպատուէր և նախատուէր կամ չար
չարուէր է. ինչպէս կարելի է ենթադրել թէ առանց
պատճառ մը տրուելու՝ իրեն այդ գրիւններն եղած ըլ
լան զորս միայն ինքն մեր կողմէն եղած կը համարի և կը
ջանայ տնայէս հատուցնել, իւր թէ մենք վայրենի դա
զան մը ըլլայինք, և ուղիքն պատասել զիշատել անմեղ
դատուի մը. . . . Ի վերջ բանիս դարձեալ կըմնեմ
արժա. ժողովը որ իմ հոս կանչուելուս պատճառ տը
ւող գրութիւնները մէջ ընտրուի և ըստ այնմ իմ դա

տատանս տեսնուի յանուն արդարութեան և իրաւանց
Ի Կ. Պօլիս, 9—21 Յունիս 1871:

(Ստորագրութիւն) Մեսրոպի եպիսկոպոս
Մինչև հոս համառոտաբար ամբիփոխած չորս տեսակ
գրութեանց և տեղեկութեանց իմաստէն, ինչպէս որ
յայտնի կը տեսնուի, թէ՛ ամբաստանողին և թէ՛ ամբա
սանեալին բողոքները մէկմէկէ չատ տարբեր ըլլալուն
համար ծագած վէճին բուն պատճառները և ցուալի հե
տեանքին ճիշդ եղելութիւնը ձեռք բերելու մտօք, և
մասնաւորապէս Երուսաղէմայ Ս. Պատրիարքին հրա
րամանագրոյն համեմատ, թէ՛ Մեսրոպի եպիսկոպոս
թէ՛ Ստուածատուր վարդապետ մանրամասն հարցա
քննութեան (խթիթար) տակ առնուելով, քննիչ յանձ
նախումբս իւր ներկայութեամբ ստորագրել տուաւ զա
նոնք. որոնց պատճէնը մեր ստորագրութեամբ վաւե
րացեալ և բնագիրը յանձնախումբիս արձանագրու
թեանց մէջ ամբիփոխած ըլլալով՝ ներկայ տեղեկագրի
հետ դատ գատ տնտրանքներով ձեռ ամենապատուութեա
նը կրնի իրկայցնել:

Ստուածատուր վարդապետին խթիթարը և Մե
սրոպի եպիսկոպոսի դէմ իւր տուած բողոքագիրը համե
մատելով և ուղղորդութեամբ քննելով՝ հետեւեալ հակա
ստիճանները կը տեսնամք. — Մեսրոպի եպիսկոպոս ան
գամ մը միայն ձեռքովը գլխուս զարկաւ, չանթան
ինքը չյափշտակեց այլ Յակոբեանը, գող և աւաղակ և
Լէֆթէր ըսողը ինքը չէր՝ այլ Եսաուֆեան Պէտրոս
Քաղաւոր Յակոբեանը, բռնի ստորագրութիւն առնող
Մեսրոպի եպիսկոպոսը չէր: Գաշիրէի սենեակս իւր
տնտեսարկութեամբ կնքուեցաւ, պէսպէս ինքնը բերողը
կարապետ Յակոբեան էր, անթիւ չարահայն, սուր
բերին չխնայի, և կերակուր ուտել չկամենայուս համար
Քաղաւոր Յակոբեանը Լիւս. հարցոց թէ վարդապետը
կերակուր կերաւ, գոհ է, կը վախճայ թէ պիտի թոնա
ւորենք ասաց, չդուրս ելլալու արդիւնք չէի, վասնզի
պարտաւ կերթայի և կը պատուէր: Գաշիրէի սենեակս
գոցուելու և Եզրապետի մէջ եղած կառուածները գրա
ւելու Եզրապետ Յակոբեանին առաջարկութեամբ թէ
քաղուեցաւ. բերանս գոցելին թէ չէ, չեմ յիշեր, Ա
րապետ Յակոբեանը վիզս սխմեց: Իսկ թիւ 2 բողոքա
գրոյն մէջ ըսածներուն վրայօք չկարողացաւ բռն մը
հատաւաւ: Եւ թիւ 3 բողոքոյ մասին կը կարծէ թէ Ս
մին եպիսկոպոսին առաջուց գրած ըլլալ: Բնաւ գաճակ
չէն քաղած իրեն կըսէ, միայն թէ հայհայցելն: Թիւ 3
բողոքը չեմ կարող անունը տալ ասաց. ուստի առանց
քննութեան մնաց. վասնզի Ստուածատուր վարդա
պետ իւր բողոքը հաստատել չկամեցաւ և խորհրդակա
նին անունը տալ չուզեց: Մեսրոպի եպիսկոպոսին խթիթ
թարի, և Ստուածատուր վարդապետին և Երուսաղէ
մայ սրբազան Պատրիարքին իրեն դէմ առ աղջոյն
վարչութիւնն եղած ամբաստանութեանց իւր պատաս
խան իւր գրած բողոքագիրը համեմատելով՝ հետեւեալ
արդիւնքը կը քաղեմ:

(Մնացորդը յաջորդ բնով:)

ՉԱՆՈՐԳ ԶԱՐԶԱԿԱՆՄ ՄԻ

Սթիկ հօտեմբեր ամսագրոյն մէջ զոր այս շաբ
թու ընկալաք, ընդդէմ Երուսաղէմ երկար յօդուած
մի հրատարակուած կը տեսնեմք, որ լի է թշնամանք
անիրաւ յարձակումներով: Ինչո՞ւ. վասնզի Երուսաղէ
մի իրաւագաւոր և իրենց սիրելի Երուսաղէմ իւրա
ւունքները կը պաշտպանէ, վասնզի յիշեալ երկրին
աղջոյն արժանաբար Վարչութեան և յովանայի
մեծա. աղջապէր եղիպտահայոց եկած դանդաղաց
նամակները կը հրատարակէ. և այս պատճառաց հա
մար յանցաւոր կը համարուի Երուսաղէմ առաջին հեղի
նակին վերոյիշեալ յօդուածոյն. Քանզի չեմք հա
ւատար երբեք որ Երուսաղէմայ արժա. Սխառնու
թեան խորհրդակցութեամբ և մանաւանդ ամենա
տէր Եսայի Ս. Պատրիարքին հաճութեամբը հրա
տարակուած լինի յիշեալ ձախորդ յօդուածը: Եւ
իրաւունք ունիմք չհաւատալու. քանզի բարեխէր հա
տարակութիւնը անշուշտ կը լինէ Վորին ամենապատուի
Սրբաշնութեան Սթիկ մէջ հրատարակուած պաշ
տոնական գրուածը, որով նոյն ամսագրոյն մէջ ի
գիպտոսի վսեմաշուք Յակոբեան եղբարք դէմ 'ի
ժամանակին հրատարակուած թշնամական յօդուածը
բոլորովին մեծեց ծանուցանելով թէ, անոր հեղի
նակը՝ առանց իւր հաճութիւնը առնելու գրած և
հրատարակած է զայն, և այս պատճառաւ յանցա
ւոր համարուելով, Սթիկ խմբագրութեան պաշտօնէն
արձակուեցաւ: Ուստի տարակուս չունիմք թէ՛ Ե

Երազյայն Արշալոյս վերնադրով յօգուածոյն հեղինակն
ևս, միևնոյն պատճառաւ յանցաւոր պիտի համար-
ուի. վասնիւի իւր գրուածոյն ոճն անդամ բոլորովին
անվայել է կրօնական միաբանութեան մը . որուն
զիշատի յատկութիւնը հեղուծիւն եղբայրսիրու-
թիւն պիտի ըլլայ, և ոչ թէ ատելութիւն:

Այս հիմնաւոր գիտողութիւնները ընելէ ետեւ,
անցնինք այժմ յիշեալ յօգուածոյն նկատմամբ քանի
մը խորհրդածութիւններ ընելու: Վերջին յօգուածոյն
հեղինակը՝ փոխանակ Պահիւրէէն գրուած նամակին
ուղղակի պատասխանելու զոր հրատարակած եմք Ար-
շալոյս մէջ ի ժամանակին և որուն հեղինակին ա-
նունը կրնամք յայտնել իրեն՝ եթէ կը փափաքի իմա-
նալ, փոխանակ կըսեմք ուղղակի անոր պատասխանե-
լու, իւր խօսքը լի բարկութեամբ և անիրաւ ռիսակա-
լութեամբ առ մեզ ուղղելով՝ այսպէս կըսէ.

«Թող մեկնէ մեզ Արշալոյս՝ թէ եթէ և ինչպիսի
նպատակներ ունեցած է կամ ունի Երուսաղէմի Սիա-
բանութիւնը՝ Եզրիպտոսի լուսնորդութեան նկատ-
մամբ: Եթէ բռնացած է Եզրիպտոսի Հայ հասարա-
կութեան վրայ, որ կուրօքն իրեն հնազանդի և իւր
ազատ կամքով իւր ապագայն չապահովէ: Եթէ ար-
դեւք եղած է նորա յառաջագիւտութեան քայլերուն
անդթութեամբ, և որն է այդ յառաջագիւտութիւնը:

«Թող մեկնէ մեզ Արշալոյս՝ թէ Երուսաղէմի Սիա-
բանութեան մը եպիսկոպոսը, կամ մը վարդապետը
հետամուտ եղած է Եզրիպտոսի լուսնորդութեան
և կամ անամօթաբար վազած է յԵզրիպտոս և յան-
գիւնած է, առանց ազգային վարչութեան որոշման
և առանց ահաբեկեան հրովարտելի, իւր անունն
յիշատակել տալ եկեղեցեաց մէջ իբրեւ լուսնորդ,
ինչպէս համարձակեցաւ ընել Արշալոյս բարեխնամ
Լուսնորդ-Մեսրոպի եպիսկոպոս»:

Սիովն խնդրած այս մեկնութիւնները՝ եզրիպտա-
բանի Հայ հասարակութեան կը վերաբերի տալ և ա-
նոնց զիտնելու բանն է. իսկ Արշալոյս՝ իբրեւ ազգա-
յին հրատարակական թերթի մը՝ չէր կրնար մերժել
նոյն նամակին՝ ինչպէս նաև Եզրիպտոսէն յուղար-
կուած ուրիշ յօգուածոց հրատարակութիւնը՝ առանց
կողմնադաշնութեան մեղադարտ ոչ լի յայտնելու:

Պատկեր Արշալոյս արքեպիսկոպոսին համար գրա-
ծին, կը պատասխանեմք թէ (Եզրիպտոսի լուսնորդութեան
մէջ թէ Արշալոյս, այլ եզրիպտահայոց բարեխնամ և
սիրելի լուսնորդն է, ոչ թէ վազած դայցած է յԵ-
զրիպտոս, ինչպէս որ անամօթաբար կը յանդգնի ա-
սել յօգուածոյն հեղինակը, այլ սահմանադրական
օրինօք ընտրեալ և հրաւիրեալ է յեզրիպտահայոց և
նոյն իսկ յազգայնօք նոյնին ի վստիմ. Երուսաղէմի
Հայոց և ազգային կեդրոնական վարչութեան հաւա-
նութեամբը դայցած է յԵզրիպտոս իբրեւ բարեխնամ
Լուսնորդ: Եւ Սիովն ամառի իւր ևս, որ այսօր Ե-
զրիպտոսի ինքնակող լուսնորդը կանուանէ զգերա .
Սիւրբուր արքեպիսկոպոսը, ընդունած և ճանչցած
էր զԵզրիպտոսի լուսնորդութեան իբրեւ օրինաւոր
Լուսնորդ Եզրիպտոսի և իւր բաժանորդաց ցանկին մէջ
նոյն բարձր տիտղոսով նշանակած էր զանուն նորա:
Բայց Բարձրագոյն Պօնէն հրովարտակը հանել տա-
լու և յուղարկելու մասին քիչ մը անհոգութիւն ե-
ղած ըլլալը ինչ կարեւորութիւն կրնայ ունենալ քան-
զի ահա վերջապէս Վ. Պօլսոյ Պատրիարքարանը փու-
թացաւ թաղի թի մի գրելու, և արքունի հրովարտա-
կը՝ ի ժամուս որ այս տողերը կը գրեմք, գուցէ ար-
դէն ելած ու յանձնուած է Եզրիպտոսի բարեխնամ
Լուսնորդին ի մեծ ուրախութիւն որտի իւր հօտին:

Ի մասին կալուածական խնդրոյն, կարծեմք թէ
բաւականէն աւելի բացատրութիւններ տրուեցան Ար-
շալոյս մէջ, և նոյն խնդրոյն մինչև ցայսօր վերջ
չտրուելուն պատճառը մեկնուեցաւ. որ ուրիշ բան
չէ բայց միայն օրինաւոր (չէրիկ թաթալիք) փոխանոր-
դագրի մը պակասութիւնը. զոր Աղէքսանդրիոյ ազ-
գային մեծարդոյ Վարչութիւնը կը պահանջէ որ յանձ-
նուի իրեն Ս. Երուսաղէմայ գործակալէն, և որ
մինչև ցայսօր ոչ գրուեցաւ և ոչ յանձնուեցաւ, չեմք
զիտեր ինչ նպատակաւ: Եւ ահա այս պատճառաւ է
որ, ազգային կեդրոնական վարչութիւնը իւր նուիր-
ական պարտքը համարեց Եզրիպտոսի կալուածական
խնդիրը կատարելապէս աւարտելէ յառաջ՝ նոյն մեծ
վիճակին առաջնորդական խնդիրը որոշել և վերջա-
ցընել, այսինքն Բարձրագոյն Պօնէն հրովարտակը
հանել տալ:

Թող մեկնէ մեզ Արշալոյս, կաղաղակէ յօգուածա-
յիւր, թէ եթէ աւարտած են Յակոբեանք Երուսա-
ղէմի եզրիպտական կալուածոց հաշիւը: Եթէ զիտեց-
ած է Յակոբեան մեծաշուք Բաղդադի ազգային հինգ տա-
րի չափ ամենայն արժանաւորութեամբ և յաջողու-
թեամբ վարեց Աղէքսանդրիոյ ազգային գործոց հո-
ղաբարձութիւնը՝ փոխանորդութեամբ ազգային բարե-
բար վստիմ. Երուսաղէմի փաշային. և իւր հնգամայ վար-
չութեան հաշիւը անցեալ տարի տուաւ Երուսաղէմի
մութեանը և յազգային գործոց բոլորովին հրաժարե-
ցաւ: Եւ ինչեալ հնգամայ ընդարձակ հաշիւը վստիմ.
Երուսաղէմի փաշային մատուցանելէ ետեւ, Արշալոյս
միջոցաւ ևս հրատարակուեցաւ ի սեղեկութիւն բոլոր
ազգային. հետեւաբար միթէ անտեղի չէ՞ յօգուածոյն
հեղինակին պահանջումը, որ ելեր մեկնութիւն կը-
խնդրէ այժմ՝ Արշալոյս՝ Աղէքսանդրիոյ ազգային
գործոց քսանեկեղու ամառ հաշուոյ նկատմամբ:

Հօգուածագիրը՝ կը յանդգնի զոգարտիչ և վատա-
համբաւիչ անուանել Արշալոյս ընդդէմ Երուսա-
ղէմայ արժաւ. Սիւրբանութեան: Բայց տեղեկագիրն
որ կը հրատարակուի Արշալոյս և Սիւրբանութեան մէջ, յօ-
գուածոյն հեղինակին պիտի ապացուցանէ թէ զոգար-
տութիւն և լեզուադարձութիւն ընողն ինքն է և ոչ
թէ Արշալոյս: որ ի վաղուց անտի որդիական անկեղծ
սէր ունեցած է սրբոյ Յակոբեանց լուսնորդ արժաւ.
Սիւրբանութեան վերայ և ոչ սակաւ ծառայութիւն
մատուցած է անոր, մանաւանդ Հնդկաստանի նկատ-
մամբ: Եզրիպտոսի կալուածական խնդրոյն խաղա-
ղասիրութեամբ վերջանալուն համար ևս ի սկզբանէ
անտի մեր կարծեմք յայտնեցինք նմա՝ բարեկամական
խրատներով, որ յար և նման էին Վ. Ե. նմա-
կաղի տեառն խրատուցը, զորս Սիւրբան կը յիշէ իւր
Նոյնեմբեր ամսագրոյն մէջ: Եթէ ամառներուն վիտայ
կրնայ ըլլալ գերա. տէր Սիւրբանու Նաղաբեանց
ծայրագոյն վարդապետը, որ Ս. Երուսաղէմայ գը-
լուսնոր Սիւրբանութեան մէջն է: Բայց եթէ մեր խա-
ղաղասիրական և բարեկամական խրատուց ուշադրու-
թիւն չմատուցուելով, գործը այսպէս շփոթեցաւ,
նմա է յանցանքը: Թող հասարակութիւնը դատէ:

Չախորդ յարձակումն անուանեցինք Սիւրբան մէջ
հրատարակեալ յօգուածը որուն կը պատասխանեմք,
և կարի իրաւամբ այս անունը յատկացուցինք անոր.
քանզի մինչդեռ Վ. Պօլսոյ ազգային Պատրիարքարա-
նէն կարգեալ յանձնաժողովը՝ Երուսաղէմայ միա-
բան Լուսնորդութեան վարդապետը կը գտնուէր
իբրեւ խաբէբայ և զոգարտիչ ընդդէմ գերա. Սիւր-
բան արքեպիսկոպոսի և իբրեւ ստախօս առաջի իւր
հոգեւոր Հօր, ամենա. տէր Եսայի Ս. Պատրիարքին
ինչպէս կը տեսնուի Յանձնաժողովոյն ընդարձակ տե-
ղեկագրէն զոր կը հրատարակեմք Արշալոյս մէջ, և
մինչդեռ ամենա. սրբազան Հայրիկը՝ Եզրիպտոսի րա-
բեխնամ առաջնորդին ներողամտութիւնը խնդրելով,
ամեն ազգասիրական և հայրական ճիշդ ի գործ կը-
գնէ ի հրապարակ չհանել Լուսնորդութեան վարդա-
պետին դատադարձութեան վիճիւր՝ հաշտեցնելով
զանոնք իրարու հետ քրիստոնէական եղբայրսիրու-
թեամբ, մինչդեռ կըսեմք, այս օրինակ է իրաց վի-
ճակը, ինչ անխոհեմութիւն կը ակնն վերայ ձէթ
սրսկել, փոխանակ չուր թափելու:

Ս. Երուսաղէմի միաբանութեան համարատուու-
թեան նկատմամբ, կըսէ վերոյիշեալ յօգուածոյն հե-
ղինակը, «Թէպէտեւ այս մասին լեւատակ և ան-
խորհուրդ օրագրական թերթիկներ ունանք՝ ըմբոստ
և անհամարաւոր հրատարակեցին նոյն Սիւրբան, և
Արշալոյս ներդուծեմք կառավարիչ համազգային ե-
րեսփոխաններէ կազմուած անոյ ժողովի առջև միայն
համարատու լինել, բայց Երուսաղէմի Սիւրբանու-
թիւնը քամահրելով ամեն սոյն օրինակ յարձակում
ներ և դաւադիր խորհուրդներ, երկար ժամանակէ ի
վեր ամենայն մտադիր ջանիւր կը պատրաստէ իւր հա-
շիւները ազգային վարչութեան մատուցանելու»:

Այս խնդրոյն վրայօք ահա առիկ Արշալոյս 920
թուոյն մէջ մեր ըրած խորհրդածութիւնը՝ որուն մէջ
ողջամիտ հասարակութիւնը պիտի տեսնէ թէ ոչ
ներդուծիւն և ոչ դաւադիր խորհուրդներ կան, այլ
կարծիք մըն է զոր յայտնած եմք բարեմտութիւն:

«Կըսեմք թէ ազգային ընդհանուր ժողովը միտք
ունի Երուսաղէմայ վանուց հաշիւը պահանջել ամե-
նապատիւ տէր Եսայի Պատրիարքէն: Այս հաշուե-
պահանջութիւնը թէպէտեւ ըստ ինքեան օրինաւոր է,
սակայն տարակոյս չկայ թէ Վ. Պօլսոյ ազգային ժո-

ղովոյն ձեռնահասութեան վեր է. հետեւաբար տէ-
ր Եսայի Ս. Պատրիարքը կրնայ պահանջել որ բոլոր
ազգէն՝ այսինքն ոչ միայն Թուրքիոյ դաւառական ե-
րեսփոխաններէն, այլև Սիւրբան, Պատրիարքարանի և
Հնդկաստանի Հայ ժողովրդոց երեսփոխաններէն
բաղկացեալ ընդհանուր ժողով մի գումարուի, և ա-
նոր միայն պարտական է Երուսաղէմայ վանուց հա-
շիւները տալ. քանզի այս մեծ վանքը ընդհանուր
ազգին կը վերաբերի և անոր նուէրներով պայծառ
մնացած է մինչև ցայսօր, և ինչպէս յայտնի է՝ տակաւին
չատ ժամանակ չէ որ Երուսաղէմայ նուիրակը 1000
լիւայէն աւելի ստակ բերաւ ի Հնդկաստանէ: Արդ-
իւրաց այս վիճակին մէջ, ամենա. տէր Եսայի Պատ-
րիարքը ինչպէս կրնայ վստահանալ և հաշիւ տալ Վ.
Պօլսոյ ազգային ժողովոյն՝ որ ոչ միայն ընդհանուր
ազգը՝ այլև Վ. Պօլսոյ Հայ ժողովուրդն անդամ
չներկայացներ. վասնիւ ինչպէս վերը ըսինք, անոր
անդամները 4-8 կամ 10 քուէով ընտրուած են,
մինչդեռ ընտրողաց թիւերը շատ մեծ են:

«Կըսեմք մեզ ազգին ողջամիտ մասէն որ մեր այս
գիտողութիւնները բարեմտութեամբ կարգան, ինչ-
պէս որ մեք ևս խիստ բարեմտութեամբ գրած եմք.
և տարակոյս չունիմք թէ իրաւունք պիտի տան մեզ»:

— Վ. Պօլսոյ Պատրիարքը լրացրոյն Վիկտ. 4 թուոյն
մէջ երկար յօգուած մի հրատարակուած կը տեսնեմք,
որ լի է աստիճան մեղադրանք ընդդէմ Վ. Պօլսոյ և
Երուսաղէմի ամենա. սրբազան Պատրիարքաց: Այս
յօգուածը՝ որ Վահագնէն ի պաշտպանութիւն իրենց
առաջնորդական խնդրոյն գրուած է, մեզ ևս յուղար-
կեցաւ. Բայց մեք ինչպէս մեր նախընթաց թուով
ծանուցած եմք, մեք թիցինք անոր հրատարակութիւ-
նը ի շնորհս Երուսաղէմի Սիւրբանութեանց, չմտա-
նելով Եզրիպտոսի մեր մեծա. բարեկամները. և ի
փոխարէն իւր այս ընթացքին, Արշալոյս սիրալիւր
և քրիստոնէապէս շնորհակալութիւն կընդունի
Սիւրբան և Նոյնեմբեր ամսագրաց մէջ իրեն նկատ-
մամբ հրատարակեալ երկու գիւղերի յօգուածներով:

Լոնտոնէն Հայադղի բարեկամք մը առ Սիւրբան
գրուած տաճիկէն նամակէն հետեւեալը կը քաղեմք,
հայերէնի թարգմանելով:

«Եզրիպտոս և Երուսաղէմ մէջ 63 ընկերութիւններ
կան, որոնք օտար երկրներու մէջ բարոյիչ (միսթո-
նէր) յուղարկելու համար հաստատուած են: Այս
ընկերութիւնները՝ յընթաց 1870 ամին 806,000
անդակական լիւս ժողովուրդն ի հասարակութիւնն:

«Արդեօք ինչպէ՞ Սիւրբան Հայրիկին՝ ազգին հին
պարտքը վճարելու համար ժողոված գումական նը-
պաստը 8060 լիւսայի հասած է մի: Թէպէտեւ մինչև
ցայսօր որչափ հաւաքուած ըլլաւ ծածուկ կը պահանջ-
բայց և այնպէս ամենին չեմ յուսար որ 8060 լիւս
ժողովուած լինի: Երեկ Վ. Ե. բարեկամները առիւց
անցաւ, անոր զրուցածին նայելով՝ թէպէտեւ յար-
դելի ոչ սակաւ անձինք (գրամական նպաստ մի վճա-
րելու համար) ստորագրուել են, բայց ստակ մի
տուած չընին եղեր»:

Այս գրուածոյն մէջ կը տեսնեմք որ Արդիւն և
Երուսաղէմի Սիւրբան հզօր ժողովուրդը՝ մեր խեղճ
Հայ ժողովրդէն հետ բաղդատուել է, կամ լաւ ևս
է ըսել Վ. Պօլսոյ գրեթէ 100,000 Հայ ժողովուրդը՝
Արդիւն և Երուսաղէմի 30 միլիոնի չափ ժողովրդոց
հետ բաղդատուել է: Այսպիսի համամտութիւն մի
խիստ անտեղի և աղայական կերակ մեզ, և կը ցու-
ցընէ որ մեր ազգասիրութիւնը՝ կամ մեր մեծամտու-
թիւնը աչքերնէս կը ծածկէ ազգին խեղճ վիճակը:

Անցեալները՝ ազգային զինուորատուութեան խնդ-
րոյն վիճարարութեան առթիւ, Երուսաղէմ մէջ ևս
կարգացինք որ մեր Հայ ժողովուրդը՝ Երուսաղէմի և
ուրիշ տէրութեանց հետ բաղդատուել էր:

Վրանապէս, կեդրոնացուցման և ապակեղծու-
ցուցման խնդրոյն վրայօք՝ շատ ժամանակ չէ, երկար
յօգուած մի կարգացինք Սիւրբան մէջ ի մեծարդոյ
Յ. Երուսաղէմի բժիշկէն գրուած և Կըլիւնի մը որ
նոյն յօգուածոյն մէջ մեր ազգային կեդրոնական
ժողովը Երուսաղէմ տէրութեանց ի բարեկամներուն
հետ բաղդատուած էր, և մերինը՝ յիշեալ ազգային
ժողովներէն աւելի ազատասիրական և աւելի բարե-
կարգ գտնուած էր:

Տարակոյս չկայ թէ մեք ինչպէս նաև բոլոր ազ-
գայինք՝ հոգեւոր և սրտիւ կը փափաքեինք որ կարող
ըլլամք ի բաղդատութիւն մտնել այնպիսի մեծ և ան-

Ի ՏԳԻՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՄՅՈՅ ԱՐԱՐՏԱՆԵԱՆ